

3705



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Երզնկա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան

«05» 08 2024թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 151 - 24

Նախաձեռնող՝

«ՋՄԵՏԱԼ ԹՐԵՅԴԻՆԳ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ  
ք. Երևան, Թումանյան 1անց, 4բն

Գործունեությունը՝

Մասիս քաղաքի մեքսիկացիների կառուցում  
Արարապի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 151 - 24

«05» թգուարաբ 2024թ.

**Արարատի մարզի Մասիս համայնքի արդյունաբերական գոտում  
մեքաղաձուլման գործարանի կառուցման ՇՄԱԳ հաշվետվություն**

Նախաձեռնող՝	«ՋՄԵՏԱԼ ԹՐԵՅԴԻՆԳ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն / նախագիծ
Գործունեությունը՝	«Ա» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզ, Մասիս համայնք

**Ներածական մաս.** «ՋՄԵՏԱԼ ԹՐԵՅԴԻՆԳ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ն նախատեսում է Արարատի մարզի Մասիս համայնքում՝ Մասիս քաղաքի վերջնամասի արդյունաբերական գոտում, կազմակերպել սև մետաղի ջարդոնի վերամշակում՝ ստանալով կաղապարակոճեր: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի «դ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը, որպես մետաղների արտադրության և վերամշակման բնագավառ, հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքների համար հիմք են հանդիսացել հետևյալ փաստաթղթերը՝

- Հողի վարձակալության իրավունքի վկայականը՝ N 16122021-03-0066, որտեղ հողատարածքի նպատակային նշանակությունը արդյունաբերական է:
- Մասիս համայնքի համայնքապետարանի կողմից տրված նախագծման թույլտվությունը՝ N 0000-6860, տրված՝ 20.06.2023թ.

**Նկարագրական մաս.** «ՋՄԵՏԱԼ ԹՐԵՅԴԻՆԳ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ն նախատեսում է Արարատի մարզի Մասիս քաղաքի վերջնամասում՝ արդյունաբերական գոտում, կազմակերպել սև մետաղի ջարդոնի վերամշակում՝ տարեկան արտադրողականությունը հասցնելով 40 000 տոննայի:

Ընդհանուր գործունեության տարածքը 0,86 հա է, որից արտադրամասի տարածքի մակերեսը՝ 1200 մ<sup>2</sup>, իսկ 1000մ<sup>2</sup> կանաչապատ տարածք է: Տարածքի ջրամատակարարումն իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ՓԲ Ընկերության կողմից, տարածքն ունի կենցաղային կեղտաջրերի հեռացման կոյուղի, հոսանքի մատակարարման ենթակայան: Արտադրություն բնակելի տները բացակայում են: Բացակայում են նաև նախադպրոցական, դպրոցական





կազմակերպությունները, հիվանդանոցները, անտառային հողերը, գյուղատնտեսական մշակահողերը և այլն:

Աշխատանքային բոլոր գործունեությունները կատարվելու են մեկ տարածքում: Տեղամասը գտնվում է Սայաթ-Նովա գյուղի ամենամոտ բնակելի տնից մոտ 1.7 կմ, իսկ Մասիս քաղաքից՝ 825 մ հեռավորության վրա: Նախկինում տվյալ տարածքը եղել է թափոնների վերամշակման գործարան և արդեն իսկ ենթարկված է մարդածին ազդեցության :

Մորֆոլոգիական տեսակետից շրջանի ռելիեֆը կուտակումային տիպի է՝ ձևավորված այլովիալ նստվածքներով: Ձևագրականորեն ռելիեֆը միջին բարձրության է, թեք, դարավանդավորված: Նախագծված տարածքը գտնվում է Արարատյան դաշտավայրում: Հետազոտվող տարածքում առկա է խոշոր խորքային խզվածք: Շրջանը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում, երկրաշարժերի օջախում:

Արտադրամասի տարածքը շրջապատված է արդյունաբերական ձեռնարկություններով, շենք-շինություններով: Նախագծի ազդեցության գոտում չկան արգելոցներ, ազգային պարկեր կամ հատուկ նշանակության պահպանվող տարածքներ, ինչպես նաև բնութագրվող տարածքում և մերձակայքում չկան ազդեցության ենթակա պատմամշակութային հուշարձաններ:

Գործարանի համար հումք է հադիսանալու սև մետաղի ջարդոնը, որը գնվելու է հիմնականում ջարդոնների ընդունման կետերից: Զարդոնը գործարան է տեղափոխվելու արդեն կտրված վիճակում: Ընկերությունը նախատեսում է մետաղաջարդոնը ներմուծել կտորների տեսքով, որի չափսերը թույլ կտան բարձել այն վառարան, առանց կտրման: Ընդունված, կտրված սև մետաղի ջարդոնը նախնական պահեստավորելու են ծածկի տակ, բետոնյա հատակի վրա և տեսակավորելու: Մետաղաջարդոնի համար նախատեսված է տեղադրել 2 հատ «Electrotherm-12» մակնիշի ինդուկցիոն վառարան: Մեկ վառարանը աշխատանքային է, մյուսը՝ ռեզերվային: Մեկ ձուլման համար վառարանում բեռնելու են 12տ ջարդոն, անհրաժեշտության դեպքում ավելացվելու է հավելանյութ և իրականացվելու է հալում: Մեկ ձուլման ցիկը (բեռնում, հալում, դատարկում) կազմում է 2ժամ 40րոպե: 24 ժամվա ընթացքում իրականացվելու է 10 ձուլում: Օրական արտադրողականությունը կազմելու է 120տ: Աշխատանքի ընթացքում ներպատվածքը մաշվում է, կախված ներպատվածքի որակից: Մեկ վառարանը կարող է իրականացնել նույն ներպատվածքով միջինը 100 ձուլվածք: 10 օրը մեկ անգամ գործող վառարանի աշխատանքը կանգնեցվելու է 2-3 օրով նոր ներպատվածք տեղադրելու համար: Այդ ժամանակահատվածում շահագործվելու է ռեզերվային վառարանը: Այսպիսով, ձուլման ցիկը կրելու է անընդհատ բնույթ: Ձուլման գործընթացում մշտական գործելու է մեկ վառարան: Ձուլումն իրականացվելու է 1700-1800 °C ջերմաստիճանի տակ: Հալվածքից կատարվելու է նմուշառում և ուղարկվելու է լաբորատորիա անալիզի: Լաբորատորիայից ստացված անալիզի հիման վրա, որոշվում է հավելանյութի ավելացման քանակը: Ձուլվածքին, որպես հավելանյութ ավելացնում են ֆերոսիլիցիում (FeSi) կամ ֆերոմանգան (FeMn) այնպիսի քանակով, որպեսզի արդյունքում ստանան Fe-500 մակնիշի պողպատ: Մեկ տոննա հալվածքին նախատեսված է ավելացնել մոտ 10կգ հավելանյութ: Վառարանից դուրս եկող հալվածքը հովացվում է շրջանառու ջրով կրիստալիզատորում, որտեղ սառեցվում է միայն հալվածքի մակերեսը: Կրիստալիզատորից ձուլվածքը տրվում է հողվակուղի, որտեղ այն կտրվում է անհրաժեշտ չափերի: Պատրաստի ապրանքը իրենից ներկայացնում է մետաղակոճեր: Հողվակուղու վրա հովացումը





իրականացվում է բնական եղանակով: Մետաղակոճերը պահեստավորվում են քարե շինությունում և վաճառվում: Դրանք հումք են հադիսանում, ամրանների, մետաղալարերի, խողովակների և այլ մետաղական արտադրանքի պատրաստման համար: Վառարանների և կրիստալիզատորի հովացումը իրականացվում է ջրի շրջանառու համակարգով՝ արտադրական ջրերի արտահոսք շրջակա միջավայր տեղի չի ունենում:

Շրջանառու ջրի հովացման համար նախատեսված է երկու բետոնե ջրավազան՝  $8 \times 4 \times 4$  մ և  $8 \times 2 \times 4$  մ չափսերով: Արտանետվող գազերի մաքրման համար նախատեսված է խոնավ հորիզոնական փոշեգազամաքրման սարք, որի մաքրման արդյունավետությունը 99% է: Սկրուբեր տալիս են 7-8 % կրակաթի լուծույթ այնպիսի քանակով, որի հեղուկ մասը բարձր ջերմաստիճանի տակ գոլորշիանում է: Վառարանից հեռացվող բարձր ջերմաստիճան ունեցող գազի խողովակի վրա նախատեսվում է տեղադրել կայծմարիչ՝ հրդեհներից խուսափելու նպատակով: Տաք գազերը մուտք են գործում սառեցման խցիկ, որի ներսում տեղադրված են լինելու բազմաշերտ թիթեղներ՝ ջերմաստիճանը կլանելու և գազի արագությունը նվազեցնելու համար: Մուտք գործող բարձր ջերմաստիճանի գազերը խցիկում սառեցումից բացի, տեղի է ունենում արագության անկում, որի շնորհիվ 4 մկ չափից մեծ մասնիկների 10-20%-ը նստում են խցիկում: Գազերի ջերմաստիճանը զտիչի մուտքում պետք է կազմի ոչ ավել, քան  $80-100^{\circ}\text{C}$ : Գազափոշեմաքրման համար նախատեսվում է հորիզոնական խոնավ սկրուբեր СГ-25, որի արդյունավետությունը կազմում է 99%: Արտանետվող գազերը հորիզոնական խողովակով անցնում են սկրուբեր, որն անմիջապես մատուցվում է զանգվածափոխանակության հատվածամաս: Զանգվածափոխանակության հատվածամասում աղտոտող նյութերը կլանվում են չեզոքացնող լուծույթով: Սկրուբերի արդյունավետությունը բարձրացնելու համար զանգվածափոխանակության հատվածում կարող են տեղադրվել պլաստիկ կցաններ ինչը թույլ կտա բարձրացնել շփման մակերեսը: Սկրուբերից դուրս եկած գազերը անցնում են կաթիլահարվածիչով և արտանետվում մթնոլորտ: Լուծույթը հիմնականում տաք գազերի հետ շփման արդյունքում գոլորշիանում է, ավելցուկը գնում է նստեցման, որտեղ հեղուկը ավազանում առանձնացվում է, վերականգնվում է նրա խտությունը և մուտք է գործում սկրուբեր:

Ինդուկցիոն վառարաններից արտանետվող գազերում փոշու պարունակությունը մի քանի անգամ քիչ է, քան աղեղային վառարաններից և կազմում է  $0,5-1,0\text{գ}/\text{մ}^3$ : Արտանետվող գազերը պարունակում են նաև ածխածնի օքսիդ և երկօքսիդ, ջրածին, թթվածին, ազոտ:

Սկրուբերի նստվածքը տալիս են վառարան, որպես հավելանյութ, իսկ կրակաթի լուծույթի մնացորդը ուղղում են կրակաթի պատրաստման տեղամաս, հասցնում նրանում կրի պարունակությունը մինչև 7-8% և վերադարձնում սկրուբեր:

Գազերը, փոշուց մաքրելու համար, նախատեսված է ասպիրացիոն համակարգ և գազամաքրման երկու փուլ, ինչը թույլ կտա մթնոլորտ արտանետվող գազերում վնասակար նյութերի պարունակությունները հասցնել սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների:

Բացի այդ, մթնոլորտում ցրման պայմանները բարելավելու համար նախատեսվում է գազերի մթնոլորտ արտանետման համար 18 մ բարձրությամբ խողովակ, որի տրամագիծը կլինի 1000 մմ: Մետաղաջարդոնի արտաչափ կտորները նախապես ենթարկվում են կտրման և տրվում են ինդուկցիոն վառարան:





Ինդուկցիոն վառարանի, գազային հատման և կրի օգտագործման արդյունքում առաջացած վնասակար արտանետումները ասպիրացիոն համակարգի միջոցով հավաքվում են և դուրս մղվում 18 մ բարձրության վրա: Մթնոլորտ վնասակար արտանետումները հաշվարկվում են համաձայն գործող մեթոդակարգերի:

**Մերձգետնյա կոնցենտրացիաների հաշվարկների արդյունքները**

h/h	Անվանումը	Վտանգավորության դասը	ՄԹԿ-ները մ.մ, մգ/մ <sup>3</sup>	Առավելագույն մերձգետնյա կոնցենտրացիաները ՄԹԿ-ի մասով	
		3	4	Արտ. հրապարակի սահմանում	մոտակա բնակելի գոտի՝ ք.Մասիս
1.	Ազոտի օքսիդներ	3	0.5	0,46	015
2.	Ածխածնի օքսիդ	4	5.0	0,12	0.04
3.	Կրափոշի	2	0.2	-	-
4.	Անօրգանական փոշի	3	0,5	-	-

Կրի և անօրգանական փոշու արտանետումները ներկայացված չեն, քանի որ, ըստ հաշվարկների արդյունքների արտանետումների քանակն աննշան է և դրանց արտանետման մակարդակի հաշվարկը նպատակահարմար չէ:

Գործարանում ջուրը օգտագործվելու է տեխնիկական և կենցաղային կարիքների համար:

Թարմ ջուրը նախատեսվում է ստանալ «Վեոլիա Ջուր» ընկերությունից: Արտադրական հրապարակում տեղադրվելու է 10 մ<sup>3</sup> տարողությամբ 2 բաք-ռեզերվուար: Արտադրական նպատակներով ջուրը պահանջվում է վառարանի և կրիստալիզատորի հովացման համակարգում, ինչպես նաև արտադրամասի հատակների հիդրոմաքրման համար: Սարքավորումների հովացման համար նախատեսվում է ընդհանուր շրջանառու համակարգ՝ երկու բետոնե հովացուցիչ ջրավազաններով՝ 8 x 4 x 4մ և 8 x 2 x 4մ չափսերով: Հովացման կայանը ամբողջությամբ ավտոմատացված է լինելու: Շրջանառու ջրի ծախսը ըստ նախագծի նախատեսվում է 7 մ<sup>3</sup>/ժամ, օրական պահանջը կազմելու է 168մ<sup>3</sup>/օր: Տնտեսակենցաղային կարիքների համար թարմ ջրի ծախսը տարեկան կազմելու է 565 մ<sup>3</sup>: Խմելու-տնտեսական և սանիտարական օգտագործումից ջրի կորուստը կազմելու է մոտ 10 %:

Վառարանների հովացման համար ջուրը չպետք է լինի կոշտ, որպեսզի խողովակների խցանումներ չառաջանան: Տեխնոլոգիական նպատակներով թարմ ջուրը հիմնականում ծախսվելու է շրջանառու համակարգի լրասնուցման համար, իսկ արտադրամասի հատակների հիդրոմաքրման համար ջրի ծախսը չնչին է լինելու:

Տեխնոլոգիական գործընթացից կեղտաջրեր չեն առաջանալու, գործարանն աշխատելու է լրիվ շրջանառու համակարգով:





Տնտեսակենցաղային կարիքներից և հատակների հիդրոմաքրումից առաջացած կեղտաջրերն ուղղվելու են 2 մ տրամագծով և 6 մ խորությամբ բետոնե լցարան, որից ժամանակ առ ժամանակ կոմունալ ծառայության կողմից աղբահան մեքենայով տեղափոխվելու են մոտակա մաքրման կայան: Սև մետաղաջարդոնի ձուլման արդյունքում առաջանալու է արտադրական թափոն՝ խարամ, որի տիպային բաղադրությունը կազմում է՝ CaO 40–50%; SiO<sub>2</sub> 10–20%; FeO 15–20% և վտանգավորության դաս չունի: Ամեն ձուլվածքից տեսականորեն առաջանում է 0,1 տ խարամ՝ օրական կատարվելու է 10 ձուլվածք, հետևաբար առաջանալու է 340 տ/տարի խարամ: Այն կարող է օգտագործվել ճանապարհաշինությունում՝ 30% փոխարինելով խճին, ինչը իջեցնում է ճանապարհաշինության արժեքը և օգտագործվում է բետոնի արտադրությունում՝ որպես սորբենտ կեղտաջրերի մաքրման համար:

**Պարծառարանական մաս.** ՀՀ-ում շահագործվող երկաթի հանքեր չկան, սակայն պողպատից ստացվող արտադրանքի պահանջարկը հանրապետությունում գնալով աճում է:

Ջմետալ թրեյդինգ կոմպանի» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող գործարանը կառուցվելու է նախկին (դեռ Սովետական Միության տարիներին) թափոնների վերամշակման գործարանի տարածքում: Վարձակալական պայմանագրով նախատեսվում է վերականգնել տվյալ տարածքում նախկին գործունեությունը՝ ստեղծելով նոր աշխատատեղեր:

Նախագծի իրականացման արդյունքում նախատեսվում է ստեղծել 30-40 նոր աշխատատեղեր և ներդնել արդիական տեխնոլոգիա և սարքավորումներ:

Ջարդոնի հալման համար նախատեսվում է ինդուլցիոն վառարան, որը աշխատում է էլեկտրականությամբ և գազի ծախս չի պահանջվում: Արտանետումները նվազագույնի հասցնելու համար ընկերությունը ներդնելու է ժամանակակից 90% արդյունավետությամբ ֆիլտրացիոն համակարգեր:

Արտադրամասը նախատեսվում է նախկին գործարանի տարածքում, ինչի արդյունքում չեն խախտվի նոր հողատարածքներ, չի լինի բացասական ազդեցություն կենսաբազմազանության վրա:

Տարածքի ընտրությունը, կիրառվող արդիական տեխնոլոգիան և նախատեսվող բնապահպանական միջոցառումները նվազագույնի կհասցնեն շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա բացասական ազդեցությունը:

Բոլոր հումքատեսակների տեղափոխումն իրականացվելու է փակ ծածկով ավտոտրանսպորտային միջոցներով, իսկ դրանց և արտադրական մնացորդների ընդունումը և պահեստավորումն իրականացվելու է փակ շինություններում՝ դրանց համար նախատեսված համապատասխան բետոնապատ տեղամասերում՝ բացառելով փոշու հետևանքով տարածքի հնարավոր աղտոտումը:

Արտադրական գործունեության ընթացքում աղմուկի և թրթռման մակարդակը կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում: Ընկերության տարածքի սահմանագծերում աղմուկի մակարդակը չի գերազանցում ֆոնային 30-40 դԲԱ:

Արտադրությունում գտնվող բոլոր էլեկտրական ենթակայանները համալրված են լինելու հրդեհային ավտոմատ սարքերով, որոնք վերահսկում են տարածքներում հրդեհի յուրաքանչյուր բռնկում և դրանց բացահայտման դեպքում ավտոմատ միացվելու են հրդեհների մեկուսացման համակարգերը:





Գործունեությունն իրականացվելու է գոյություն ունեցող և արդեն կառուցապատված, արտադրական գոտու տարածքում:

Գործունեության տարածքում հողային ռեսուրսերի պահպանման հիմնական միջոցառում են հանդիսանում հումքի և արտադրական մնացորդների /թափոնների/ տեղակայման և պահեստավորման խնդիրները:

«ԶՄԵՏԱԼ ԹՐԵՅԴԻՆԳ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ի աշխատանքի ընթացքում դեպի կոյուղու ցանց արտահոսքի ջրերը գոյանում են տնտեսակենցաղային գործունեության արդյունքում: Արտադրական ջրերը, որոնք հիմնականում գոյանում են սարքավորումների հովացման արդյունքում, շրջանառու են: Համակարգը փակ է և արտահոսքեր դեպի կոյուղի կամ շրջակա միջավայր բացակայում են:

Վառարանները շահագործվելու են անվտանգության կանոնների խստագույն պահպանման կանոնակարգով: Սարքերը գրացված է ԱՎՕ-ների պետական ռեեստրում:

**Եզրափակիչ մաս.** ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ «ԶՄԵՏԱԼ ԹՐԵՅԴԻՆԳ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ի կողմից նախատեսված գործունեության վերաբերյալ հանրային ծանուցումը և քննարկումներն իրականացվել են Արարատի մարզի Մասիս բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում: Փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, հանրային քննարկումների ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Գործունեության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինից, կադաստրի կոմիտեներից, Արարատի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել լրամշակումներում: Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների և շահագործման փուլերում կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

### **Պարտադիր կատարման ենթակա պահանջներ**

1. Պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
2. Պահպանել՝ ՀՀ Կառավարության 2006թ. փետրվարի 2-ի՝ «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվների վերաբերյալ» 160-Ն որոշումը:
3. Պահպանել՝ ՀՀ առողջապահության նախարարի 2010թ-ի «Կազմակերպությունների աշխատատեղերում աշխատանքային գոտու օդում քիմիական նյութերի սահմանային



թույլատրելի կոնցենտրացիաները N 2.2.5-004-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N 27 հրամանը:

4. Պահպանել՝ ՀՀ առողջապահության նախարարի 2006 թվականի 17 մայիսի՝ «Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիրաբացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆ N 2.2.4-009-06 հաստատելու մասին» N533-Ն հրամանը:
5. Պահպանել՝ ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. 25 դեկտեմբերի՝ «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N430-Ն հրամանը:
6. Պահպանել տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրության պահանջները
7. Արտադրական պատահարները բացառելու և կանխարգելելու նպատակով արտադրական վտանգավոր օբյեկտի շահագործման ամբողջ ընթացքում ապահովել տեխնոլոգիական սարքավորումների, տեխնիկական միջոցների, օբյեկտի կառույցների, տեղակայանքների անվտանգության գոտու տարածքների պարբերական զննումներ, ինչպես նաև կազմակերպել աշխատողների ուսուցում և որակավորման ստուգում:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԶՄԵՏԱԼ ԹՐԵՅԴԻՆԳ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Մասիս համայնքի արդյունաբերական գոտում մետաղաձուլման գործարանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն/նախագծին տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Շուշանիկ Կարապետյան